American University of Armenia
Հայաստանի Ամերիկյան Համալսարան
A US-accredited institution affiliated with the University of California

ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
պարոն Դավիթ Հարությունյանին

14.06.2016թ.

Հարգելի պարոն Հարությունյան,

Ստորև Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության հարցերով հետաքրքրված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից ընտրված ԱՃԹՆ Բազմաշահագրգիռ կողմերի խմբում քաղաքացիական հասարակության չորս և գիտական հաստատության մեկ ներկայացուցչի անվանական ցուցակը:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ են ընտրվել.

- **Սոնա Այվազյանը**, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն
- **Արթուր Գրիգորյանը**, Էկոիրավունք ՀԿ-ի նախագահ
- **Ինգա Զարաֆյանը**, Էկոլուր տեղեկատվական ՀԿ-ի նախագահ
- **Արթուր Ղազարյանը**, Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում ՀԿ-ի նախագահ

Գիտական հաստատության ներկայացուցիչ է ընտրվել.

- **Հարություն Մովսիսյանը**, Երևանի պետական համալսարանի Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ

Տեղեկացնում ենք նաև, որ սույն ընտրությանը նախորդել է ԱՃԹՆ հարցերով հետաքրքրված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ երեք տասնյակից ավելի քննարկումներ, որոնք կազմակերպվել են բաց և թափանցիկ սկզբունքով: Յուրաքանչյուր մասնակից հնարավորություն է ունեցել ազատորեն արտահայտել իր կարծիքը և մասնակցել որոշումների կայացմանը: Բոլոր հանդիպումներն արձանագրվել և էլեկտրոնային փոստով ուղարկվել են մասնակիցներին, ինչպես նաև տեղադրվել են crm.aua.am կայքում:

Հարգանքով՝

Ալեն Ամիրխանյան
ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի տնօրեն

40 Marshal Baghramyan Ave.
Yerevan 0019, Republic of Armenia
Phone: (+374 60) 69 40 40
(+374 10) 32 40 40
Fax: (+374 60) 61 25 12
E-mail: info@aua.am

U.S. Office
300 Lakeside Drive, Suite 700
Oakland, California 94612
Phone: +1(510) 987-9452
Fax: +1(510) 208-3576

Facebook: AUArmenia
Twitter: AUAnewsroom
Youtube: AUAuploads
Website: aua.am

**Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ)**
**Բազմաշահագրգիռ կողմերի խմբում (ԲՇԿ)**
**քաղաքացիական հասարակության անդամների ընտրության արդյունքների**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՃԹՆ ԲՇԿ խմբում քաղաքացիական հասարակության կողմից 5 տեղի համար առաջադրվել էր 7 թեկնածու.

- **Այվազյան Սոնա**, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն
- **Գրիգորյան Արթուր**, Էկոիրավունք ՀԿ-ի նախագահ
- **Գրիգորյան Էրիկ**, Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիայի համանախագահ
- **Զարաֆյան Ինգա**, Էկոլուր տեղեկատվական ՀԿ-ի նախագահ
- **Համբարձումյան Արթուր**, Civil Voice ՀԿ-ի իրավաբան
- **Ղազարյան Արթուր,** Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում ՀԿ-ի նախագահ
- **Մովսիսյան Հարություն,** Երևանի պետական համալսարանի Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ

Նշված թեկնածուներից մարզային ներկայացուցչի քվոտայով ընտրվել է **Արթուր Ղազարյանը**, իսկ գիտական հաստատության ներակայցուցչի քվոտայով ընտրվել է **Հարություն Մովսիսյանը**:

Եվս 3 անդամի ընտրությունը կատարվել է էլեկտրոնային փոստի միջոցով: Էլեկտրոնային փոստով քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցել է 49 հոգի[1]: Էլեկտրոնային նամակ ստացել և դրա մասին հեռախոսազանգով լրացուցիչ տեղեկացվել է 45 հոգի[2]: Քվեարկությանը մասնակցել է 23 հոգի:

**Քվեարկությանը մասնակցած անձանց ցուցակ.**

- **Քրիստինա Սաղաթելյան**, Կապանի կանանց ռեսուրս կենտրոն ՀԿ
- **Արթուր Գրիգորյան**, Էկոիրավունք ՀԿ
- **Պերճ Բոջուկյան**, Վանաձորի Օրհուս կենտրոն

---

[1] Հունվարի 22 կամ 27, 2016թ. որոշման համաձայն http://crm.aua.am/files/2016/02/EITI_Meeting-Minutes_27-Jan-2016-Yerevan.pdf

[2] 49 հոգուց 1 հոգի չի տիրապետում հայերենի, 1 հոգի էլեկտրոնային փոստ չունի, երկու հոգի մի քանի ամիս առաջ նամակով հայտնել են, որ չեն ցանկանում ԱՃԹՆ-ի հետ կապված նամակներ ստանալ, 1 հոգուց նամակը հետ է եկել:

- **Արթուր Ղազարյան**, Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում ՀԿ
- **Անահիտ Առաքելյան**, Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում ՀԿ
- **Հեղինե Մնացականյան**, Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում
- **Ռուզաննա Ասրյան**, Էկոլոգիական անվտանգության ապահովման զարգացման կենտրոն ՀԿ
- **Հեղինե Վարդանյան**, Առաջադեմ մեդիա տեխնոլոգիաների կենտրոն
- **Լիլյա Ղազարյան**, Առաջադեմ մեդիա տեխնոլոգիաների կենտրոն
- **Գայանե Բալայան**, Առաջադեմ մեդիա տեխնոլոգիաների կենտրոն
- **Մանե Ղազարյան**, Զարգացման նախաձեռնություններ ՀԿ
- **Արմեն Ղազարյան**, ARK բնապահպանական ՀԿ
- **Գարեգին Նավասարդյան**, Ռեգիոնալ մոնիտորինգի ինստիտուտ ՀԿ
- **Արշավիր Խալափյան**, Ռեգիոնալ մոնիտորինգի ինստիտուտ ՀԿ
- **Վահագն Խաչատուրյան**, Տնտեսական, քաղաքական, իրավագիտական հետազոտությունների և կանխատեսումների կենտրոն
- **Հարություն Մովսիսյան**, ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոն
- **Վազգեն Գալստյան**, Ջերմուկի զարգացման կենտրոն ՀԿ
- **Վալենտինա Գևորգյան**, Հայաստանի ամերիկյան համալսարան, Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոն
- **Բաբկեն Հարությունյան**, Civil Voice ՀԿ
- **Էրիկ Գրիգորյան**, Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա
- **Վիկտորյա Բուռնազյան**, Էկոլուր տեղեկատվական ՀԿ
- **Ինգա Զարաֆյան**, Էկոլուր տեղեկատվական ՀԿ
- **Սոնա Այվազյան**, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

**Քվեարկության արդյունքները.**

**Գրիգորյան Արթուր** - 22 ձայն
**Ինգա Զարաֆյան** - 19 ձայն
**Սոնա Այվազյան** - 18 ձայն
**Էրիկ Գրիգորյան** - 6 ձայն
**Արթուր Համբարձումյան** - 4 ձայն

Այսպիսով՝

**Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) Բազմաշահագրգիռ կողմերի խմբում (ԲՇԿ) քաղաքացիական հասարակության անդամներ ընտրվել են**

- **Այվազյան Սոնա**, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն
- **Գրիգորյան Արթուր**, Էկոիրավունք ՀԿ-ի նախագահ
- **Զարաֆյան Ինգա**, Էկոլուր տեղեկատվական ՀԿ-ի նախագահ
- **Ղազարյան Արթուր,** Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում ՀԿ-ի նախագահ
- **Մովսիսյան Հարություն,** Երևանի պետական համալսարանի Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ

**Արձանագրությունը կազմեց՝**

**Լենա Նազարյան**, ՀԱՅ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

**Հունիսի 10, 2016թ.**
**Երևան**